ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<1> մարտի 2016թ. N 17-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԵՎԱՆԻ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԿՆՔՎԱԾ N156 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 9-րդ ենթակետի, 113-րդ հոդվածի, 130-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 815-Ա որոշման և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» ստեղծելու մասին» N43-Ա որոշման պահանջները՝

կարգադրում եմ՝

1. 2016 թվականի մարտի 1-ից լուծել Հասմիկ Յուպիտերի Ղազարյանի հետ 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված N156 աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով նրան Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնից և կատարել վերջնահաշվարկ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ